



ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԳՐԱՐԱՅԻՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

Հաստատված է
ՀԱԱՀ գիտական խորհրդի
կողմից
“03”. 06. 2016 թ. (արձ. № 10)

Վավերացնում եմ
ՀԱԱՀ ռեկտոր
_____ Ա. Թարվերդյան
“06”.06. 2016 թ.

**ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ
ՈՒՍՈՒՄՆԱՌՈՒԹՅԱՆ ԱԿՆԿԱԼՎՈՂ ՎԵՐՋՆԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ
ՎԵՐԱՆԱՅՄԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ**

Կրթական ծրագրերի ուսումնառության ակնկալվող վերջնարդյունքների վերանայման քաղաքականություն

1. Նախաբան

Համալսարանի մասնագիտությունների կրթական ծրագրերում (ՄԿԾ) ներառված ուսումնառության ակնկալվող վերջնարդյունքները հայտարարում են այն մասին, թե ուսանողը ինչ կգիտենա, կհասկանա և կկարողանա կատարել կրթական ծրագրի յուրացման ավարտին:

Ուսումնառության ակնկալվող վերջնարդյունքները (ՈՒԱՎ) ուսումնառողների և շրջանավարտների սպասվող և չափվող հստակ ձեռքբերումներն են, արտահայտված գիտելիքների, կարողությունների և հմտությունների լեզվով (ի՞նչ պետք է շրջանավարտը իմանա և կարողանա կատարել կրթական ծրագրի ավարտին):

ՈՒԱՎ-երին ներկայացվող հիմնական պահանջն է նրանց գնահատումը, ինչի համար անհրաժեշտ են գնահատման գործիքներ և մեթոդներ, որոնք թույլ են տալիս որոշել ուսումնառողի ձեռքբերումների աստիճանը:

ՈՒԱՎ-երին գնահատման հիմնական միավորներն են կոմպետենտությունը և կոմպետենցիաները:

Կոմպետենցիաները գիտելիքների, կարողությունների և հմտությունների դինամիկ համախումբ է, որը թույլ է տալիս շրջանավարտին դառնալ մրցունակ աշխատաշուկայում:

Կոմպետենցիաների ձևավորումը իրականացվում է տեսական և գործնական գիտելիքների համադրման և պրակտիկ խնդիրների լուծման արդյունքում:

Կրթական ծրագրի նպատակի և ՈՒԱՎ-ների աշխատաշուկայի պահանջներին համապատասխանացնելու համար անհրաժեշտ է դրանք պարբերաբար վերանայել:

Կրթական ծրագրի ուսումնառության ակնկալվող վերջնարդյունքների վերանայումը իրականացվում է հաշվի առնելով կրթության, գիտության, ագրոպարենային համակարգի զարգացման միտումները:

ՈՒԱՎ-երի վերանայման մեխանիզմը իրականացվում է դրանց գնահատման և կրթական ծրագրի որակից սպառողների (շահակիցների) բավարարվածության վերլուծության անցկացման միջոցով:

Համալսարանի շահակից կողմերի հետաքրքրությունները և կարիքները համարվում են կրթական ծրագրերի նպատակների և ՈՒԱՎ-երի ձևավորման և փոփոխման հիմնական գործոններից մեկը: Դրա համար համալսարանի շահակից կողմերի կարիքների բացահայտումը անհրաժեշտ է իրականացնել անընդհատ և պարբերաբար:

Համալսարանի շահակից կողմերը (ուսանողները, պրոֆեսորադասախոսական կազմը, գործատուները, շրջանավարտները, աշխատաշուկայի ներկայացուցիչները) պետք է սերտ և ակտիվ համագործակցեն Համալսարանի հետ ՄԿԾ-երի ուսումնառության ակնկալվող վերջնարդյունքների ձևավորման և վերանայման գործընթացում: Դա ընկած է Թյունինգի մեթոդաբանության հիմքում:

2. Նպատակ

Սույն քաղաքականության նպատակն է Համալսարանում ՄԿԾ-երի և դասընթացների (մոդուլների) նպատակի և ՈԻԱՎ-երի վերանայման միջոցով աշխատաշուկայի և սպառողներին պահանջներին համապատասխան կրթական ծրագրերի ստեղծումը:

Խնդիրներն են՝

- ՄԿԾ-երի ՈԻԱՎ-երի ուսումնասիրումը և վերլուծությունը,
- ՄԿԾ-երի ՈԻԱՎ-երի գնահատումը՝ հաշվի առնելով սպառողների (շահակիցների) կարիքները և պահանջները,
- ՄԿԾ-երի ՈԻԱՎ-երի վերանայումը, վերաձևակերպումը և արդիականացումը՝ աշխատաշուկայի արդի պահանջներին համապատասխան:

3. Կիրառման ոլորտ

Քաղաքականությունը կիրառվում է հետևյալ ոլորտների նկատմամբ՝

- Մասնագիտությունների կրթական ծրագրերի վերլուծություն:
- Մասնագիտությունների կրթական ծրագրերի մշտադիտարկում և գնահատում:
- Մասնագիտությունների կրթական ծրագրերի վերանայում:

4. Նկարագրություն

- 4.1. Կրթական ծրագրի ՈԻԱՎ-երի վերանայումը պարբերական գործընթաց է, որը ներառում է կրթական ծրագրի վերաբերյալ որակական և քանակական տվյալների հավաքագրումը, վերլուծությունը և գնահատումը, և որի նպատակն է կրթական ծրագրերի բարելավումը:
- 4.2. ՄԿԾ-երի ՈԻԱՎ-երի վերանայման նպատակն է Համալսարանի կրթական ծրագրերի բարելավումը և արդիականացումը:
- 4.3. Համալսարանում կրթական ծրագրի նպատակների և ՈԻԱՎ-երի վերանայման գործընթացը իրականացվում է ներքևից վերև սկզբունքով:
- 4.4. Համալսարանում կրթական ծրագրի ՈԻԱՎ-երի գնահատման և վերանայման գործիքներից են թեստերը, հարցման թերթիկները, ռուբրիկները, քարտեզավորումը, բենչմարքինգը:
- 4.5. ՄԿԾ-երի և դասընթացների (մոդուլների) ՈԻԱՎ-երի վերանայման նպատակով համալսարանը կազմակերպում և անցկացնում է հարցումներ հիմնական շահակիցների շրջանում (ուսանողներ, պրոֆեսորադասախոսական կազմ, շրջանավարտներ և գործատուներ):
- 4.6. *Գործատուների կողմից* տրվող արձագանքը թույլ է տալիս ստանալ առավել հստակ և օբյեկտիվ գնահատական՝ կրթական ծրագրերի ՈԻԱՎ-երի համապատասխանության վերաբերյալ արտադրության և աշխատաշուկայի պահանջներին:
- 4.7. Համալսարանի մասնագիտական ամբիոններում և ֆակուլտետներում կուտակվում է տեղեկատվություն շրջանավարտների, պրոֆեսորադասախոսական կազմի և գործատուների վերաբերյալ ինֆորմացիա, որոնք ակնկալում են փոփոխություններ մասնագետների պատրաստման գործընթացում:
- 4.8. Ամբիոնը(ները) ներկայացնում է առաջարկություն ֆակուլտետ՝ կրթական ծրագրի ՈԻԱՎ-երում առաջարկվող փոփոխությունների ցանկի տեսքով:

4.9. Ֆակուլտետում վերլուծվում է առաջարկվող փոփոխությունների հիմնավորվածությունը և նպատակահարմարության դեպքում վեր է հանում դրանք ֆակուլտետի գիտական խորհրդի քննարկմանը:

4.10. Կրթական ծրագրի սպասվող վերջնարդյունքների փոփոխությունների հաստատման դեպքում ֆակուլտետային փորձագետների խումբը անցնում է կրթական ծրագրի նպատակների և ՈԻԱՎ-երի վերանայում և վերաձևակերպում:

4.11. Փոփոխված կրթական նպատակները և ուսումնառության վերջնարդյունքները հաստատվում են ֆակուլտետի գիտական խորհրդում:

4.12. Նոր հիմնավորված կրթական ծրագիրը, ներառյալ ծրագրի նպատակը (առաքելությունը) և ՈԻԱՎ-երը հաստատվում են համալսարանի գիտական խորհրդի կողմից և վավերացվում ռեկտորի կողմից, որից հետո կրթական ծրագրի ղեկավարը ներդրվում է գործածության մեջ:

5. Քաղաքականության իրականացում

ՄԿԾ-երի և դրանց մեջ ներառված դասընթացների (մոդուլների) ՈԻԱՎ-երի վերանայումը պետք է երաշխավորի ՄԿԾ-երի բարելավումը, դրանց նպատակների և վերջնարդյունքների համապատասխանեցումը Համալսարանի շահակից կողմերի սպասելիքներին և աշխատաշուկայի պահանջներին:

6. Պատասխանատվություն

ՄԿԾ-երի և դրանց մոդուլների ՈԻԱՎ-երի վերանայման, վերամշակման, ներդրման և իրականացման համար պատասխանատու են՝

- Ուսումնական աշխատանքների գծով պրոռեկտորը,
- Ֆակուլտետների ղեկանները և համապատասխան որակի պատասխանատուները,
- Ամբիոնի վարիչները և համապատասխան որակի պատասխանատուները:
- Տվյալ ոլորտի համար պատասխանատու այլ ստորաբաժանումները և աշխատանքային խմբերը:

7. Քաղաքականության վերանայում

Սույն քաղաքականությունը ենթարկվում է վերանայման համալսարանի «Փաստաթղթերի և գրանցումների կառավարում» ընթացակարգի համաձայն: